«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի 13.07.2022թ. թիվ 7 նիստում:
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի նախագահ,
ոստիկանության գնդապետ
Մ. Մուրադյան
«_____»_____ 2022 թ.

ԿԱՐԳ
«ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՊԱՐԵԿ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ԵՎ ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրում (այսուհետ՝ Կրթահամալիր) «Ոստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորման նախնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման և դրան համապատասխան լրացուցիչ կրթական ծրագրով վերապատրաստման ընթացքում ստուգարքների (դիֆերենցված ստուգարքների) անցկացման ձևերը, ընթացակարգերը, արդյունքների ամրագրման կարգը, գնահատման սանդղակներն ու չափանիշները, ստուգարքներին (դիֆերենցված ստուգարքներին) սովորողների մասնակցությունը դադարեցնելու հիմքերը և կարգը, ստուգարքներին (դիֆերենցված ստուգարքներին) սովորողների չներկայանալու հետևանքները, ստուգարքների (դիֆերենցված ստուգարքների) անցկացման ընթացքում դասախոսների և սովորողների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ստուգարքների (դիֆերենցված ստուգարքներին) վերահանձնման ընթացակարգերը:
1.2. Կրթահամալիրի այլ ներքին իրավական ակտերը նշված հարաբերությունների նկատմամբ կիրառելի են այնքանով, որքանով չեն հակասում սույն կարգին:
1.3. Ստուգարքների (դիֆերենցված ստուգարքների) անցկացման նպատակը սովորողների մոտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատումն է՝ պետական կրթական չափորոշիչով նախատեսված ուսումնառության արդյունքների և կատարման չափանիշների հիման վրա:

2. ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԸ (ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԸ) ԱՆՑԿԱՑՆՈՂ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ

2.1. Ստուգարքը (դիֆերենցված ստուգարքը) անցկացնում է տվյալ առարկայի (մոդուլի) ուսումնական պարապմունքներն անցկացրած դասախոսը:
2.2. Եթե տվյալ առարկայի (մոդուլի) ուսումնական պարապմունքները տարբեր ժամանակահատվածներում անցկացրել են երկու կամ ավելի դասախոսներ, ապա ստուգարքը (դիֆերենցված ստուգարքը) անցկացնում այն դասախոսը, որը տվյալ դասակում անցկացրել է ավելի մեծ թվով ուսումնական պարապմունքներ:

2.3. Եթե մոդուլի ուսումնական պարապմունքները միաժամանակ անցկացրել են երկու կամ ավելի դասախոսներ, ապա նրանք ստուգարքը (դիֆերենցված ստուգարքը) անցկացնում և սովորողի՝ ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) արդյունքը որոշում են համատեղ:
2.4. Դասախոսի բացակայության դեպքում նրա փոխարեն ստուգարքը (դիֆերենցված ստուգարքը) անցկացնում է տվյալ առարկան (մոդուլը) դասավանդող այլ դասախոս՝ կրթաճյուղի պետի որոշմամբ:

3. ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ (ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ) ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3.1. Ստուգարքն անցկացվում է առարկայական (մոդուլային) ծրագրով դրա համար նախատեսված ուսումնական պարապմունքի (պարապմունքների) ընթացքում: Եթե դասախոսն այդ ուսումնական պարապմունքի (պարապմունքների) ընթացքում չի ավարտել տվյալ դասակի բոլոր սովորողների ստուգարքի անցկացումը, ապա մնացած սովորողների ստուգարքն անցկացվում է տվյալ աշխատանքային օրվա և դրան հաջորդող աշխատանքային օրերի ընթացքում, տվյալ դասակի ուսումնական պարապմունքներից ազատ ժամանակահատվածում, մինչև ստուգարքային շաբաթվան հաջորդող շաբաթվա վերջին աշխատանքային օրվա ավարտը:
3.2. Դիֆերենցված ստուգարքն անցկացվում է մոդուլային ծրագրով դրա համար նախատեսված ուսումնական պարապմունքի (պարապմունքների) ընթացքում: Եթե դասախոսը այդ ուսումնական պարապմունքի (պարապմունքների) ընթացքում չի ավարտել տվյալ դասակի բոլոր սովորողների դիֆերենցված ստուգորքի անցկացումը, ապա մնացած սովորողների դիֆերենցված ստուգարքն անցկացվում է տվյալ աշխատանքային օրվա ընթացքում, տվյալ դասակի ուսումնական պարապմունքներից ազատ ժամանակահատվածում:
3.3. Ստուգարքները (դիֆերենցված ստուգարքները) անցկացվում են Կրթահամալիրի տարածքում:
3.4. Դասախոսը ստուգարքը (դիֆերենցված ստուգարքը) սկսելուց առաջ Կրթահամալիրի ուսումնական կենտրոնի նախնական մասնագիտական պատրաստականության բաժնից պետք է ստանա ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) տեղեկագիրը:
3.5. Դասախոսը ստուգարքը (դիֆերենցված ստուգարքը) սկսելուց առաջ կրթաճյուղից պետք է ստանա ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) հարցաշարը, իրավիճակային խնդիրների, վարժությունների, գործնական առաջադրանքների ցանկերը, տոմսերը, սովորողների համար նախատեսված թերթիկները, այլ անհրաժեշտ նյութերն ու առարկաները:
3.6. Ստուգարքին (դիֆերենցված ստուգարքին) սովորողների ներկայանալու հերթականությունը որոշվում է դասախոսի կողմից՝ հաշվի առնելով սովորողների ցանկությունը, իսկ դրա բացակայության դեպքում՝ սովորողների ազգանունների և անունների այբբենական կարգը:
3.7. Ստուգարքին (դիֆերենցված ստուգարքին) ներկայացած սովորողի նույնականացումը դասախոսը կատարում է սովորողի ստուգման գրքույկի միջոցով:
3.8. Եթե սովորողը ստուգարքին (դիֆերենցված ստուգարքին) ներկայացել է առանց ստուգման գրքույկի, ապա դասախոսն այդ մասին տեղեկացնում է Կրթահամալիրի ուսումնական կենտրոնի պետին կամ նրա տեղակալին, որից հետո սովորողի նույնականացումը կատարում է սովորողի ծառայողական վկայականի, անձնագրի, նույնականացման քարտի կամ վարորդական իրավունքի վկայականի միջոցով: Այդ դեպքում ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) տեղեկագրում սովորողի ստուգման

գրքույկի համարի գրառումը և սովորողի ստուգման գրքույկում տվյալ տողի լրացումը կատարվում է Կրթահամալիրի ուսումնական կենտրոնի նախնական մասնագիտական պատրաստականության բաժնի կողմից, սովորողի կողմից ստուգման գրքույկը ներկայացնելուց կամ նրան նոր ստուգման գրքույկ հատկացնելուց հետո:
3.9. Ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) անցկացման ընթացքում քննասենյակում կամ ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) անցկացման վայրում որպես կանոն կարող են միաժամանակ գտնվել պատասխանին պատրաստվող առավելագույնը 5 սովորողներ: Թեստավորման ձևով անցկացվող դիֆերենցված ստուգարքների դեպքում թեստավորումն իրականացվում է դասակի բոլոր սովորողների համար միաժամանակ:
3.10. Ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) անցկացման ընթացքում քննասենյակում կամ ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) անցկացման վայրում ներկա գտնվելու իրավունք ունեն Կրթահամալիրի պետը և նրա առաջին տեղակալը, Կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետը և նրա տեղակալը, Կրթահամալիրի ուսումնական կենտրոնի պետը և նրա տեղակալը, կրթաճյուղի պետը, իսկ Կրթահամալիրի պետի թույլտվությամբ՝ նաև այլ անձինք: Նշված անձինք իրավունք չունեն առանց դասախոսի թույլտվության միջամտել ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) ընթացքին կամ սովորողների ներկայությամբ կարծիք հայտնել դասախոսի կողմից կատարվող գործողությունների վերաբերյալ և իրավունք ունեն սովորողների կողմից սույն կարգի խախտումներ հայտնաբերելու դեպքում դասախոսի ուշադրությունը հրավիրել այդ խախտումների վրա:
3.11. Եթե ստուգարքը (դիֆերենցված ստուգարքը) անցկացվում է տոմսերի միջոցով, ապա տոմսը ընտրում է սովորողը: Տոմս փոխելն արգելվում է:
3.12. Ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) ավարտին դասախոսն ամբողջությամբ լրացված տեղեկագիրը պետք է հանձնի Կրթահամալիրի ուսումնական կենտրոնի նախնական մասնագիտական պատրաստականության բաժին:
3.13. Ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) ավարտին դասախոսը ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) հարցաշարը, իրավիճակային խնդիրների, վարժությունների, գործնական առաջադրանքների ցանկերը, տոմսերը, սովորողների համար նախատեսված թերթիկները, այլ անհրաժեշտ նյութերն ու առարկաները պետք է հանձնի կրթաճյուղ:
3.14. Եթե ստուգարքը (դիֆերենցված ստուգարքը) անցկացվում է երկու կամ ավելի օրերի ընթացքում, ապա դասախոսը ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) տեղեկագիրը Կրթահամալիրի ուսումնական կենտրոնի նախնական մասնագիտական պատրաստականության բաժնից պետք է ստանա յուրաքանչյուր օր և տվյալ օրվա ավարտի դրությամբ լրացված տեղեկագիրը հանձնի Կրթահամալիրի ուսումնական կենտրոնի նախնական մասնագիտական պատրաստականության բաժին: Այդ դեպքում ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) արդյունքները իրավական նշանակություն են ստանում դասախոսի կողմից վերջին ուսումնական պարապմունքի օրվա արդյունքներով տեղեկագիրն ամբողջությամբ լրացնելուց հետո:
3.15. Եթե ստուգարքը (դիֆերենցված ստուգարքը) անցկացվում է երկու կամ ավելի օրերի ընթացքում, ապա դասախոսը ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) հարցաշարը, իրավիճակային խնդիրների, վարժությունների, գործնական առաջադրանքների ցանկերը, տոմսերը, սովորողների համար նախատեսված թերթիկները, այլ անհրաժեշտ նյութերն ու առարկաները կրթաճյուղից պետք է ստանա յուրաքանչյուր օր և տվյալ օրվա ավարտին դրանք հանձնի կրթաճյուղ:

4. ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ (ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ) ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ

4.1. Ստուգարքի արդյունքներով սովորողը ստանում է «ստուգված» կամ «չստուգված» նշումը:
4.2. Դիֆերենցված ստուգարքի արդյունքներով սովորողը ստանում է 0-ից 10 միավորային համակարգով գնահատական, հետևյալ սանդղակով.

գնահատականը թվերով	**գնահատականը տառերով**
0	անբավարար
1	
2	
3	
4	բավարար
5	
6	
7	լավ
8	
9	գերազանց
10	

4.3. Դիֆերենցված ստուգարքի տեղեկագրում պետք բովանդակվեն «դիֆերենցված ստուգարքի միավորը», «ընթացիկ գնահատականների միջին թվաբանականը» և «մոդուլի վերջնական գնահատականը թվերով» սյունակներ:
4.4. Տեղեկագրի «դիֆերենցված ստուգարքի միավորը» սյունակում դասախոսն ամրագրում է այն միավորը, որը սովորողը ստացել է դիֆերենցված ստուգարքի ընթացքում:
4.5. Եթե սովորողը դիֆերենցված ստուգարքով ավարտվող մոդուլի ուսումնական պարապմունքների ընթացքում ստացել է երկու կամ ավելի գնահատական, ապա դասախոսը հաշվարկում է ուսումնական պարապմունքների ընթացքում սովորողի ստացած գնահատականների միջին թվաբանականը (0,5 միավորից ներառյալ մինչև 1 միավոր կլորացնելով) և այն ամրագրում է տեղեկագրի «ընթացիկ գնահատականների միջին թվաբանականը» սյունակում: Դրանից հետո դասախոսը հաշվարկում է «դիֆերենցված ստուգարքի միավորը» սյունակում և «ընթացիկ գնահատականների միջին թվաբանականը» սյունակում ամրագրված միավորների միջին թվաբանականը (0,5 միավորից ներառյալ մինչև 1 միավոր կլորացնելով) և այն ամրագրում է տեղեկագրի «մոդուլի վերջնական գնահատականը թվերով» սյունակում:
4.6. Եթե սովորողը դիֆերենցված ստուգարքով ավարտվող մոդուլի ուսումնական պարապմունքների ընթացքում չի ստացել ոչ մի գնահատական կամ ստացել է մեկ գնահատական, ապա դասախոսը տեղեկագրի «ընթացիկ գնահատականների միջին թվաբանականը» սյունակում դնում է «-» նշանը: Այդ դեպքում տեղեկագրի «դիֆերենցված ստուգարքի միավորը» սյունակում ամրագրված գնահատականը ամրագրվում է նաև «մոդուլի վերջնական գնահատականը թվերով» սյունակում:
4.7. Ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) արդյունքը դասախոսը ամրագրում է տեղեկագրում և սովորողի ստուգման գրքույկում: Տեղեկացրում և ստուգման գրքույկում գրառումները պետք է կատարվեն առանց ջնջումների և ուղղումների:
4.8. Ստուգարքի «չստուգված» նշումը և դիֆերենցված ստուգարքի «անբավարար» գնահատականը ստուգման գրքույկում չի ամրագրվում:

5. ՍՏՈՒԳԱՐՔԻՆ ԵՎ ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍՏՈՒԳԱՐՔԻՆ ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ

5.1. Եթե դասախոսը հայտնաբերում է, որ պատասխանին պատրաստվող կամ պատասխանող (վարժություն, հնարք կատարող) սովորողը թույլ է տվել ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) կարգի խախտում, ապա դասախոսը դադարեցնում է ստուգարքին (դիֆերենցված ստուգարքին) տվյալ սովորողի մասնակցությունը:
5.2. Սովորողի կողմից ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) կարգի խախտում է համարվում ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) ընթացքում հետևյալ արարքներից առնվազն մեկի կատարումը՝
1) իր մոտ բջջային հեռախոս, այլ էլեկտրոնային սարքեր, տեխնիկական միջոցներ, ուսումնական նյութեր կամ ծածկագրեր ունենալը կամ դրանցից օգտվելը,
2) այլ սովորողների հետ հաղորդակցվելը, տոմսերը կամ նշումների համար դասախոսի կողմից տրամադրված թերթիկները կամ այլ նյութերը կամ առարկաները այլ սովորողներին փոխանցելը,
3) աղմկելը կամ այլ կերպ ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) անցկացմանը խոչընդոտելը,
4) առանց դասախոսի թույլտվության քննասենյակը կամ ստուգարքի - (դիֆերենցված ստուգարքի) անցկացման վայրը լքելը,
5) դասախոսի կամ այլ սովորողների նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելը,
6) դասախոսի թույլտվությամբ քննասենյակը կամ ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) անցկացման վայրը լքելու դեպքում 5 րոպեի ընթացքում անհարգելի չվերադառնալը:
5.3. Սովորողի կողմից կատարված արարքը որպես ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) կարգի խախտում գնահատելու մասին որոշումն ընդունում է դասախոսը՝ հաշվի առնելով սովորողի արարքի ազդեցությունը ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) բնականոն ընթացքի, ինչպես նաև սովորողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման օբյեկտիվության վրա:
5.4. Սովորողի կողմից ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) ընթացքում էլեկտրոնային սարքերից, տեխնիկական միջոցներից, ուսումնական նյութերից օգտվելը կամ այլ սովորողների հետ հաղորդակցվելը կամ նրանց նյութեր կամ առարկաներ փոխանցելը չի համարվում ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) կարգի խախտում, եթե նշված գործողությունների կատարումը բխում է ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) հարցի, տոմսի կամ վարժության պահանջներից:
5.5. Ստուգարքին (դիֆերենցված ստուգարքին) սովորողի մասնակցությունը դադարեցնելու մասին դասախոսը կազմում է արձանագրություն: Արձանագրության մեջ նշվում է ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) անցկացման օրը, առարկան կամ մոդուլը, դասակը, սովորողի անունը, հայրանունը և ազգանունը, ստուգարքին կամ դիֆերենցված ստուգարքին սովորողի մասնակցությունը դադարեցնելու հիմքը: Արձանագրությունը ստորագրվում է դասախոսի և սովորողի կողմից: Սովորողի կողմից արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում դասախոսն այդ մասին նշում է արձանագրության մեջ:
5.6. Դասախոսը կազմված արձանագրությունը նույն օրը փոխանցում է Կրթահամալիրի ուսումնական կենտրոնի պետին:
5.7. Ստուգարքին սովորողի մասնակցությունը դադարեցնելու դեպքում ստուգարքի տեղեկագրում կատարվում է «չստուգված» նշումը, իսկ դիֆերենցված ստուգարքին սովորողի մասնակցությունը դադարեցնելու դեպքում դիֆերենցված ստուգարքի տեղեկագրում որպես մոդուլի վերջնական գնահատական ամրագրվում է 0 միավորը:

6. ՍՏՈՒԳԱՐՔԻՆ ԿԱՄ ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍՏՈՒԳԱՐՔԻՆ ՍՈՎՈՐՈՂԻ ՉՆԵՐԿԱՅԱՆԱԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

6.1. Եթե սովորողը ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) օրը մինչև աշխատանքային օրվա ավարտը չի ներկայացել ստուգարքին (դիֆերենցված ստուգարքին), ապա դասախոսը ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) տեղեկագրում կատարում է «չի ներկայացել» նշումը:
6.2. Ստուգարքին (դիֆերենցված ստուգարքին) չներկայացած սովորողը պարտավոր է ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մասնագիտական պրակտիկայի սկզբից 5 օր առաջ Կրթահամալիրի պետին ուղղված զեկուցագրով ներկայացնել ստուգարքին (դիֆերենցված ստուգարքին) չներկայանալու պատճառը:
6.3. Չներկայանալու պատճառը հարգելի համարվելու դեպքում սովորողի ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) անցկացումը կազմակերպվում է մինչև մասնագիտական պրակտիկայի ավարտը, անհատական ժամանակացույցով, որը հաստատվում է Կրթահամալիրի ուսումնական կենտրոնի պետի կողմից:
6.4. Չներկայանալու պատճառը հարգելի չհամարվելու կամ սահմանված ժամկետում սովորողի կողմից զեկուցագիր չներկայացնելու դեպքում տեղեկագրում կատարված «չի ներկայացել» նշումը իրավաբանորեն հավասարեցվում է ստուգարքի «չստուգված» նշմանը կամ դիֆերենցված ստուգարքի «անբավարար» գնահատականին:

7. ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ (ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ) ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՍԱԽՈՍԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Դասախոսն իրավունք ունի՝
1) սովորողի գիտելիքները, կարողությունները և հմտությունները գնահատելու համար նրան տալ ճշգրտող և լրացուցիչ հարցեր՝ առարկայական (մոդուլային) ծրագրի սահմաններում,
2) սովորողի խնդրանքով նրան թույլ տալ լքել քննասենյակը կամ ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) անցկացման վայրը՝ մինչև 5 րոպե ժամանակով, առանց քննական տոմսի, նշումների համար տրված թերթիկի և այլ նյութերի:
7.2. Դասախոսը պարտավոր է՝
3) պատասխանել սովորողների կողմից տրված՝ ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) ընթացակարգին առնչվող հարցերին,
1) սովորողին հայտնել ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) արդյունքը,
2) սովորողին հնարավոր առավելագույն միավորից ցածր միավոր նշանակելու դեպքում սովորողի խնդրանքով նրան պարզաբանել միավորի իջեցման պատճառները՝ հիմք ընդունելով գնահատման չափանիշները:
7.3. Դասախոսին արգելվում է՝
1) պատասխանել սովորողների կողմից տրված՝ հարցերի և տոմսերի վերաբերյալ բովանդակային հարցերին,
2) սովորողներին հայտնել կամ հուշել հարցի կամ տոմսի պատասիանը,
3) սովորողներին տալ առարկայական (մոդուլային) ծրագրի մեջ չմտնող թեմաներին վերաբերող հարցեր կամ առաջադրանքներ,
4) երկու կամ ավելի սովորողներին միաժամանակ թույլ տալ լքել քննասենյակը կամ ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) անցկացման վայրը:

8. ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ (ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ) ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Սովորողն իրավունք ունի՝
1) դասախոսին տալ ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) ընթացակարգին առնչվող հարցեր,
2) ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) ավարտին դասախոսից իմանալ դրա արդյունքը,
3) իր խնդրանքով դասախոսից ստանալ պարզաբանում գնահատման չափանիշների վերաբերյալ:
8.2. Սովորողը պարտավոր է՝
1) ստուգարքին (դիֆերենցված ստուգարքին) ներկայանալ սահմանված ժամին, իր ստուգման գրքույկով,
2) դասախոսի և այլ սովորողների նկատմամբ դրսևորել հարգալից վերաբերմունք,
3) դասախոսի թույլտվությամբ քննասենյակը կամ ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) անցկացման վայրը լքելու դեպքում վերադառնալ 5 րոպեի ընթացքում, բացառությամբ հարգելի պատճառներով չվերադառնալու դեպքերի:
8.3. Սովորողին արգելվում է՝
1) իր մոտ ունենալ բջջային հեռախոս, այլ էլեկտրոնային սարքեր, տեխնիկական միջոցներ, ուսումնական նյութեր կամ ծածկագրեր կամ օգտվել դրանցից,
2) հաղորդակցվել այլ սովորողների հետ, միմյանց փոխանցել տոմսերը կամ նշումների համար դասախոսի կողմից տրամադրված թերթիկները կամ այլ նյութեր կամ առարկաներ,
3) աղմկել կամ այլ կերպ խոչընդոտել ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) անցկացմանը,
4) առանց դասախոսի թույլտվության լքել քննասենյակը կամ ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) անցկացման վայրը:
8.4. Սովորողի կողմից ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) ընթացքում էլեկտրոնային սարքերից, տեխնիկական միջոցներից, ուսումնական նյութերից օգտվելը կամ այլ սովորողների հետ հաղորդակցվելը կամ նրանց նյութեր կամ առարկաներ փոխանցելը չի արգելվում, եթե նշված գործողությունների կատարումը բխում է ստուգարքի (դիֆերենցված ստուգարքի) հարցի, տոմսի կամ վարժության պահանջներից:

9. «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏ ՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ» ԱՌԱՐԿԱՅԻ ՍՏՈՒԳԱՐՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9.1. «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի ստուգարքի անցկացման համար առարկայական ծրագրով նախատեսվում է վերջին ուսումնական պարապմունքը (2 ակադիմիական ժամ):
9.2. Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով:
9.3. Ստուգարքի տեղեկագիրը պետք է բովանդակի հետևյալ սյունակները՝ «սովորողի ազգանունը, անունը, հայրանունը», «ստուգման գրքույկի համարը», «նշումներ ստուգարքի արդյունքների վերաբերյալ» և «դասախում ստորագրությունը»:
9.4. Ստուգարքի հարցաշարը հաստատվում է կրթաճյուղի նիստում և տրամադրվում սովորողներին ոչ ուշ, քան ստուգարքային շաբաթը սկսելուց 10 օր առաջ:
9.5. Յուրաքանչյուր սովորողին դասախոսը հարցաշարից իր ընտրությամբ տալիս է երկու հարց: Եթե սովորողը տրված հարցերին չի տալիս վերաբերելի և ճիշտ պատասխաններ, ապա դասախոսը ստուգարքի անցկացման համար նախատեսված ժամանակահատվածում

ևս երկու անգամ սովորողին տալիս է երկուական նոր հարց: Յուրաքանչյուր անգամ պատասխանին պատրաստվելու համար սովորողին տրվում է առավելագույնը 10 րոպե: Պատասխանին պատրաստվելիս սովորողն իրավունք ունի դասախոսի կողմից տրամադրված և ստորագրված թերթիկի վրա կատարել նշումներ և պատասխանելիս օգտվել դրանցից:
9.6. Սովորողի պատասխանը գնահատելիս դասախոսը հաշվի է առնում պատասխանի վերաբերելիությունը հարցին և պատասխանի ճշտությունը:
9.7. Ստուգարքի տեղեկագրում «ստուգված» նշումը կատարվում է, եթե սովորողն իրեն տրված առնվազն երկու հարցերին տալիս է վերաբերելի և ճիշտ պատասխաններ: «Չստուգված» նշումը կատարվում է, եթե սովորողն իրեն տրված առնվազն երկու հարցերին չի տալիս վերաբերելի և ճիշտ պատասխաններ:
9.8. Եթե սովորողն ուսումնական պարապմունքների ընթացքում ստացել է երկու կամ ավելի «բավարար» կամ ավելի բարձր գնահատական և չի ստացել «անբավարար» գնահատական, ապա դասախոսն առանց սովորողին հարցել տալու ստուգարքի տեղեկագրում կատարում է «ստուգված» նշումը:

10. «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ» ՄՈԴՈՒԼԻ ՍՏՈՒԳԱՐՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1. «Ոստիկանության ծառայողների էթիկա և բարեվարքություն» մոդուլի ստուգարքի անցկացման համար առարկայական ծրագրով նախատեսվում է վերջին ուսումնական պարապմունքը (2 ակադիմիական ժամ):
10.2. Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով:
10.3. Ստուգարքի տեղեկագիրը պետք է բովանդակի հետևյալ սյունակները՝ «սովորողի ազգանունը, անունը, հայրանունը», «ստուգման գրքույկի համարը», «նշումներ ստուգարքի արդյունքների վերաբերյալ» և «դասախում ստորագրությունը»:
10.4. Ստուգարքի հարցաշարը հաստատվում է կրթաճյուղի նիստում և տրամադրվում սովորողներին ոչ ուշ, քան ստուգարքային շաբաթը սկսելուց 10 օր առաջ:
10.5. Յուրաքանչյուր սովորողին դասախոսը հարցաշարից իր ընտրությամբ տալիս է երկու հարց: Եթե սովորողը տրված հարցերին չի տալիս վերաբերելի և ճիշտ պատասխաններ, ապա դասախոսը ստուգարքի անցկացման համար նախատեսված ժամանակահատվածում ևս երկու անգամ սովորողին տալիս է երկուական նոր հարց: Յուրաքանչյուր անգամ պատասխանին պատրաստվելու համար սովորողին տրվում է առավելագույնը 10 րոպե: Պատասխանին պատրաստվելիս սովորողն իրավունք ունի դասախոսի կողմից տրամադրված և ստորագրված թերթիկի վրա կատարել նշումներ և պատասխանելիս օգտվել դրանցից:
10.6. Սովորողի պատասխանը գնահատելիս դասախոսը հաշվի է առնում պատասխանի վերաբերելիությունը հարցին և պատասխանի ճշտությունը:
10.7. Ստուգարքի տեղեկագրում «ստուգված» նշումը կատարվում է, եթե սովորողն իրեն տրված առնվազն երկու հարցերին տալիս է վերաբերելի և ճիշտ պատասխաններ: «Չստուգված» նշումը կատարվում է, եթե սովորողն իրեն տրված առնվազն երկու հարցերին չի տալիս վերաբերելի և ճիշտ պատասխաններ:
10.8. Եթե սովորողն ուսումնական պարապմունքների ընթացքում ստացել է երկու կամ ավելի «բավարար» կամ ավելի բարձր գնահատական և չի ստացել «անբավարար» գնահատական, ապա դասախոսն առանց սովորողին հարցել տալու ստուգարքի տեղեկագրում կատարում է «ստուգված» նշումը:

11. «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ» ՄՈԴՈՒԼԻ ՍՏՈՒԳԱՐՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11.1. «Ոստիկանության և հասարակության փոխհամագործակցությունը» մոդուլի ստուգարքի անցկացման համար առարկայական ծրագրով նախատեսվում են վերջին երկու ուսումնական պարապմունքները (4 ակադիմիական ժամ):
11.2. Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով:
11.3. Ստուգարքի տեղեկագիրը պետք է բովանդակի հետևյալ սյունակները՝ «սովորողի ազգանունը, անունը, հայրանունը», «ստուգման գրքույկի համարը», «նշումներ ստուգարքի արդյունքների վերաբերյալ» և «դասախում ստորագրությունը»:
11.4. Ստուգարքի հարցաշարը հաստատվում է կրթաճյուղի նիստում և տրամադրվում սովորողներին ոչ ուշ, քան ստուգարքային շաբաթը սկսելուց 10 օր առաջ:
11.5. Յուրաքանչյուր սովորողին դասախոսը հարցաշարից իր ընտրությամբ տալիս է երկու հարց: Եթե սովորողը տրված հարցերին չի տալիս վերաբերելի և ճիշտ պատասխաններ, ապա դասախոսը ստուգարքի անցկացման համար նախատեսված ժամանակահատվածում ևս երկու անգամ սովորողին տալիս է երկուական նոր հարց: Յուրաքանչյուր անգամ պատասխանին պատրաստվելու համար սովորողին տրվում է առավելագույնը 10 րոպե: Պատասխանին պատրաստվելիս սովորողն իրավունք ունի դասախոսի կողմից տրամադրված և ստորագրված թերթիկի վրա կատարել նշումներ և պատասխանելիս օգտվել դրանցից:
11.6. Սովորողի պատասխանը գնահատելիս դասախոսը հաշվի է առնում պատասխանի վերաբերելիությունը հարցին և պատասխանի ճշտությունը:
11.7. Ստուգարքի տեղեկագրում «ստուգված» նշումը կատարվում է, եթե սովորողն իրեն տրված առնվազն երկու հարցերին տալիս է վերաբերելի և ճիշտ պատասխաններ: «Չստուգված» նշումը կատարվում է, եթե սովորողն իրեն տրված առնվազն երկու հարցերին չի տալիս վերաբերելի և ճիշտ պատասխաններ:
11.8. Եթե սովորողն ուսումնական պարապմունքների ընթացքում ստացել է երկու կամ ավելի «բավարար» կամ ավելի բարձր գնահատական և չի ստացել «անբավարար» գնահատական, ապա դասախոսն առանց սովորողին հարցել տալու ստուգարքի տեղեկագրում կատարում է «ստուգված» նշումը:

12. «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ» ՄՈԴՈՒԼԻ ՍՏՈՒԳԱՐՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12.1. «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլի ստուգարքի անցկացման համար մոդուլային ծրագրով նախատեսվում են վերջին ուսումնական պարապմունքը (2 ակադեմիական ժամ):
12.2. Ստուգարքն անցկացվում է գործնական առաջադրանքների կատարման ձևով:
12.3. Ստուգարքի տեղեկագիրը պետք է բովանդակի հետևյալ սյունակները՝ «սովորողի ազգանունը, անունը, հայրանունը», «ստուգման գրքույկի համարը», «նշումներ ստուգարքի արդյունքների վերաբերյալ» և «դասախոսի ստորագրությունը»:
12.4. Գործնական առաջադրանքների ցանկը հաստատվում է կրթաճյուղի նիստում: Գործնական առաջադրանքների ցանկը սովորողներին տրամադրվում է ոչ ուշ, քան ստուգարքային շաբաթը սկսելուց 10 օր առաջ:
12.5. Յուրաքանչյուր սովորողին դասախոսը գործնական առաջադրանքների ցանկից իր ընտրությամբ տալիս է մեկ առաջադրանք: Եթե սովորողը ամբողջությամբ, ճշգրիտ և ճիշտ հերթականությամբ չի կատարում առաջադրանքը, ապա դասախոսը ստուգարքի

անցկացման համար նախատեսված ժամանականատվածում ևս երկու անգամ սովորողին տալիս է մեկական նոր առաջադրանք:
12.6. Սովորողի կողմից գործնական առաջադրանքի կատարումը գնահատելիս դասախոսը հաշվի է առնում սովորողի կողմից կատարվող գործողությունների ամբողջականությունը, հերթականությունը և ճշգրտությունը:
12.7. Ստուգարքի տեղեկագրում «ստուգված» նշումը կատարվում է, եթե սովորողն իրեն տրված առնվազն մեկ առաջադրանքը կատարել է ամբողջությամբ, ճշգրիտ և ճիշտ հերթականությամբ: «Չստուգված» նշումը կատարվում է, ե թե սովորողն իրեն տրված առաջադրանքներից ոչ մեկը չի կատարել ամբողջությամբ, ճշգրիտ և ճիշտ հերթականությամբ:
12.8. Եթե սովորողն ուսումնական պարապմունքների ընթացքում ստացել է երկու կամ ավելի «բավարար» կամ ավելի բարձր գնահատական և չի ստացել «անբավարար» գնահատական, ապա դասախոսն առանց սովորողին հարցեր տալու ստուգարքի տեղեկագրում կատարում է «ստուգված» նշումը:

13. «ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ» ՄՈԴՈՒԼԻ ՍՏՈՒԳԱՐՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13.1. «Կրիմինալիստիկա» մոդուլի ստուգարքի անցկացման համար մոդուլային ծրագրով նախատեսվում են վերջին երկու ուսումնական պարապմունքները (4 ակադեմիական ժամ):
13.2. Ստուգարքն անցկացվում է իրավիճակային խնդիրների լուծման ձևով:
13.3. Ստուգարքի տեղեկագիրը պետք է բովանդակի հետևյալ սյունակները՝ «սովորողի ազգանունը, անունը, հայրանունը», «ստուգման գրքույկի համարը», «նշումներ ստուգարքի արդյունքների վերաբերյալ» և «դասախոսի ստորագրությունը»:
13.4. Իրավիճակային խնդիրների ցանկը հաստատվում է կրթաճյուղի նիստում:
13.5. Իրավիճակային խնդիրների ցանկը սովորողներին տրամադրվում է ոչ ուշ, քան ստուգարքային շաբաթը սկսելուց 10 օր առաջ:
13.6. Յուրաքանչյուր սովորողին դասախոսը իրավիճակային խնդիրների ցանկից իր ընտրությամբ տալիս է մեկ իրավիճակային խնդիր: Եթե սովորողը ճիշտ չի լուծում իրավիճակային խնդիրը, ապա դասախոսը ստուգարքի անցկացման համար նախատեսված ժամանակահատվածում ևս երկու անգամ սովորողին տալիս է մեկական իրավիճակային խնդիր: Յուրաքանչյուր սովորողին տրվում է առավելագույնը 10 րոպե՝ պատասխանին պատրաստվելու համար: Պատասխանին պատրաստվելիս սովորողն իրավունք ունի դասախոսի կողմից տրամադրված և ստորագրված թերթիկի վրա կատարել նշումներ և պատասխանելիս օգտվել դրանցից:
13.7. Սովորողի պատասխանը գնահատելիս դասախոսը հաշվի է առնում սովորողի կողմից իրավիճակային խնդրի լուծման ճշտությունը, այն է՝ տվյալ խնդրում նկարագրված իրավիճակում պարեկային ծառայողի կողմից կատարման ենթակա գործողությունների ամբողջականությունը, հերթականությունը և ճշգրտությունը, վերլուծական միտքն ու կողմնորոշման հատկությունը:
13.8. Ստուգարքի տեղեկագրում «ստուգված» նշումը կատարվում է, եթե սովորողը ճիշտ է լուծում իրեն տրված իրավիճակային խնդիրներից առնվազն մեկը: «Չստուգված» նշումը կատարվում է, եթե սովորողը ճիշտ չի լուծում իրեն տրված իրավիճակային խնդիրերից ոչ մեկը:
13.9. Եթե սովորողն ուսումնական պարապմունքների ընթացքում ստացել է երկու կամ ավելի «բավարար» կամ ավելի բարձր գնահատական և չի ստացել «անբավարար» գնահատական,

ապա դասախոսն առանց սովորողին իրավիճակային խնդիր տալու ստուգարքի տեղեկագրում կատարում է «ստուգված» նշումը:

14. «ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ», «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ԵՎ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14.1. «ՀՀ սահմանադրական իրավունքի հիմունքներ, մարդու իրավունքներ և ոստիկանություն», «ՀՀ քրեական իրավունք», «ՀՀ քրեական դատավարության իրավունք», «Վարչական իրավունք» և «Մասնագիտական հոգեբանություն և հաղորդակցման հմտություններ» մոդուլների դիֆերենցված ստուգարքների անցկացման համար մոդուլային ծրագրերով նախատեսվում է վերջին ուսումնական պարապմունքը (2 ակադեմիական ժամ):
14.2. Դիֆերենցված ստուգարքն անցկացվում է թեստավորման ձևով: Թեստավորումն իրականացվում է համակարգչային ծրագրի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ թղթային տարբերակով:
14.3. Դիֆերենցված ստուգարքի տեղեկագիրը պետք է բովանդակի հետևյալ սյունակները՝ «սովորողի ազգանունը, անունը, հայրանունը», «ստուգման գրքույկի համարը», «ճիշտ պատասխանների քանակը», «դիֆերենցված ստուգարքի միավորը», «ընթացիկ գնահատականների միջին թվաբանականը», «մոդուլի վերջնական գնահատականը թվերով», «մոդուլի վերջնական գնահատականը տառերով» և «դասախոսի ստորագրությունը»:
14.4. Դիֆերենցված ստուգարքի թեստերի ցանկը հաստատվում է կրթաճյուղի նիստում: Թեստերի ցանկը պետք է բովանդակի 60 թեստ: Յուրաքանչյուր թեստը պետք է բովանդակի հարցը և պատասխանի չորս տարբերակ, որոնցից մեկը ճիշտ է, երեքը՝ սխալ:
14.5. Թեստերը սովորողներին նախապես տրամադրելն արգելվում է:
14.6. Յուրաքանչյուր սովորողին պատահականության սկզբունքով տրվում է 20 թեստ, որոնց լուծման համար տրվում է առավելագույնը 40 րոպե: Թեստավորման ժամանակի ավարտից 10 րոպե առաջ դասախոսն այդ մասին հայտարարում է սովորողներին:
14.7. Եթե տեխնիկական կամ այլ օբյեկտիվ պատճառներով թեստավորումն ընդհատվում է, ապա տվյալ սովորողի (սովորողների) համար անցկացվում է նոր թեստավորում:
14.8. Եթե սովորողը չի հասցնում մինչև թեստավորման ժամանակի ավարտը լուծել բոլոր թեստերը, ապա սովորողի կողմից տրված ճիշտ պատասխանները պահպանվում և հաշվարկվում են:
14.9. Թեստավորման արդյունքների գնահատումն իրականացվում է հետևյալ սանդղակով.

ճիշտ պատասխանների քանակը	**համարժեք միավորը**
0	0
1-2	1
3-4	2
5-6	3
7-8	4
9-10	5
11-12	6
13-14	7

15-16	8
17-18	9
19-20	10

15. «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ» ՄՈԴՈՒԼԻ ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍՏՈՒԳԱՐՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15.1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում» մոդուլի դիֆերենցված ստուգարքի անցկացման համար մոդուլային ծրագրով նախատեսվում են վերջին երեք ուսումնական պարապմունքները (6 ակադեմիական ժամ): Դիֆերենցված ստուգարքի համար նախատեսված առաջին ուսումնական պարապմունքի ընթացքում անցկացվում է դիֆերենցված ստուգարքի առաջին մասը՝ մոդելավորված ՃՏՊ դեպքի վայրի սխեմա կազմելու ձևով, իսկ երկրորդ և երրորդ ուսումնական պարապմունքների ընթացքում անցկացվում է դիֆերենցված ստուգարքի երկրորդ մասը՝ բանավոր հարցման ձևով, տոմսերի միջոցով և արձանագրություն կազմելու ձևով:

15.2.Դիֆերենցված ստուգարքի տեղեկագիրը պետք է բովանդակի հետևյալ սյունակները՝ «սովորողի ազգանունը, անունը, հայրանունը», «ստուգման գրքույկի համարը», «սխեմայի կազմման միավորը», «բանավոր հարցման տոմսի համարը», «բանավոր հարցման միավորը», «արձանագրության կազմման միավորը», «դիֆերենցված ստուգարքի միավորը», «ընթացիկ գնահատականների միջին թվաբանականը», «մոդուլի վերջնական գնահատականը թվերով», «մոդուլի վերջնական գնահատականը տառերով» և «դասախոսի ստորագրությունը»:

15.3. Դիֆերենցված ստուգարքի բանավոր հարցման հարցաշարը և բանավոր հարցման տոմսերը հաստատվում են կրթաճյուղի նիստում: Հարցաշարը տրամադրվում է սովորողներին ոչ ուշ, քան ստուգարքային շաբաթը սկսելուց 10 օր առաջ:

15.4. Սովորողի կողմից մոդելավորված ՃՏՊ դեպքի վայրի սխեմայի կազմումը գնահատվում է 0-ից 2 միավոր, մեկ միավոր գնահատման քայլով: Սովորողի կողմից սխեմայի կազմումը գնահատելիս դասախոսը հաշվի է առնում ՃՏՊ դեպքի վայրի սխեմայի կազմման կանոնների պահպանումը, սխեմայի կազմման ճշգրտությունը և լրիվությունը, դրա համապատասխանությունը մոդելավորված իրավիճակին:

15.5. Բանավոր հարցման տոմսերում նախատեսվում է երկուական հարց: Բանավոր հարցման ժամանակ սովորողի կողմից տոմսը ընտրելուց հետո նրան տրվում է առավելագույնը 10 րոպե պատրաստվելու համար: Պատասխանին պատրաստվելիս սովորողն իրավունք ունի դասախոսի կողմից տրամադրված և ստորագրված թերթիկի վրա կատարել նշումներ և պատասխանելիս օգտվել դրանցից: Սովորողի կողմից տոմսի յուրաքանչյուր հարցին տրված պատասխանը գնահատվում է 0-ից 3 միավոր, մեկ միավոր գնահատման քայլով: Տոմսի հարցերին սովորողի կողմից տրված պատասխանները գնահատելիս դասախոսը հաշվի է առնում պատասխանի վերաբերելիությունը հարցին, պատասխանի ճշտությունը և լրիվությունը: Սովորողի կողմից արձանագրության կազմումը գնահատվում է է 0-ից 2 միավոր, մեկ միավոր գնահատման քայլով: Սովորողի կողմից արձանագրության կազմումը գնահատելիս դասախոսը հաշվի է առնում արձանագրության կազմման կանոնների պահպանումը, արձանագրության ճշգրտությունը և լրիվությունը:

15.6. Դիֆերենցված ստուգարքի միավորը ձևավորվում է սխեմայի կազմման, բանավոր հարցման և արձանագրության կազմման միավորների հանրագումարից:

16. «ՀԱՏՈՒԿ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄՈԴՈՒԼԻ ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍՏՈՒԳԱՐՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16.1. «Հատուկ ֆիզիկական պատրաստականությոոն» մոդուլի դիֆերենցված ստուգարքի անցկացման համար մոդուլային ծրագրով նախատեսվում են վերջին չորս ուսումնական պարապմունքները (8 ակադեմիական ժամ):

16.2. Դիֆերենցված ստուգարքի համար նախատեսված առաջին և երկրորդ ուսումնական պարապմունքների ընթացքում անցկացվում է դիֆերենցված ստուգարքի առաջին մասը՝ ֆիզիկական պատրաստականության նորմատիվների կատարման ձևով, իսկ երրորդ և չորրորդ ուսումնական պարապմունքների ընթացքում անցկացվում է դիֆերենցված ստուգարքի երկրորդ մասը՝ հնարքների կատարման ձևով, տոմսերի միջոցով:

16.3. Դիֆերենցված ստուգարքի տեղեկագիրը պետք է բովանդակի հետևյալ սյունակները՝ «սովորողի ազգանունը, անունը, հայրանունը», «ստուգման գրքույկի համարը», «նորմատիվների միավորը», «տոմսի համարը», «առաջին հնարքի միավորը», «երկրորդ հնարքի միավորը», «երրորդ հնարքի միավորը», «դիֆերենցված ստուգարքի միավորը», «ընթացիկ գնահատականների միջին թվաբանականը», «մոդուլի վերջնական գնահատականը թվերով», «մոդուլի վերջնական գնահատականը տառերով» և «դասախոսների ստորագրությունները»:

16.4. Դիֆերենցված ստուգարքի ֆիզիկական պատրաստականության նորմատիվները, ուժային վարժությունների կատարման կարգը, հնարքների ցանկը, հնարքների տոմսերը հաստատվում են կրթաճյուղի նիստում: Ֆիզիկական պատրաստականության նորմատիվները և հնարքների ցանկը տրամադրվում են սովորողներին ոչ ուշ, քան ստուգարքային շաբաթը սկսելուց 10 օր առաջ:

16.5. Դիֆերենցված ստուգարքի համար նախատեսված առաջին և երկրորդ ուսումնական պարապմունքների ընթացքում սովորողը կատարում է ֆիզիկական պատրաստականության նորմատիվները:

16.6. Սովորողի կողմից ֆիզիկական պատրաստականության նորմատիվների կատարումը գնահատվում է 0-ից 4 միավոր, մեկ միավոր գնահատման քայլով:

16.7. Ֆիզիկական պատրաստականության նորմատիվների կատարումը և գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 23.01.2003թ. «Ոստիկանության ծառայողին ներկայացվող մասնագիտական, ֆիզիկական պատրաստականության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանելու մասին» № 175-Ն որոշմանը համապատասխան:

16.8. Դիֆերենցված ստուգարքի երկրորդ մասի համար կազմված տոմսերում բովանդակվում է երեքական հնարք:

16.9. Դիֆերենցված ստուգարքի համար նախատեսված երրորդ և չորրորդ ուսումնական պարապմունքների ընթացքում սովորողի կողմից տոմսը ընտրելուց հետո նա պետք է դասախոսի հրահանգով անմիջապես կատարի տոմսով նախատեսված հնարքները: 14.10. Սովորողի կողմից յուրաքանչյուր հնարքի կատարումը գնահատվում է 0-ից 2 միավոր, մեկ միավոր գնահատման քայլով:

16.11. Սովորողի կողմից հնարքի կատարումը գնահատելիս դասախոսը հաշվի է առնում հնարքի կատարման տեխնիկական և մարտավարական ճշգրտությունը, լրիվությունը, կատարման արագությունը, վերլուծական, արագ կողմնորոշման, որոշումների կայացման, մտքի ճկունության, դատողություններ անելու, հաղորդակցության և լարվածության նվազեցման հմտությունները:

16.1. Դիֆերենցված ստուգարքի միավորը ձևավորվում է ֆիզիկական պատրաստականության նորմատիվների կատարման միավորի և երեք հնարքների միավորների հանրագումարից:

17. «ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄՈԴՈՒԼԻ ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍՏՈՒԳԱՐՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17.1. «Կրակային պատրաստականություն» մոդուլի դիֆերենցված ստուգարքի անցկացման համար մոդուլային ծրագրով նախատեսվում են վերջին երկու ուսումնական պարապմունքները (4 ակադեմիական ժամ):
17.2. Դիֆերենցված ստուգարքի համար նախատեսված առաջին ուսումնական պարապմունքի ընթացքում անցկացվում է դիֆերենցված ստուգարքի առաջին մասը՝ բանավոր հարցման և վարժության կատարման ձևով, տոմսերի միջոցով, իսկ երկրորդ ուսումնական պարապմունքի ընթացքում անցկացվում է դիֆերենցված ստուգարքի երկրորդ մասը՝ գործնական հրաձգության ձևով:
17.3. Դիֆերենցված ստուգարքի տեղեկագիրը պետք է բովանդակի հետևյալ սյունակները՝ «սովորողի ազգանունը, անունը, հայրանունը», «ստուգման գրքույկի համարը», «տոմսի համարը», «բանավոր հարցման և վարժության կատարման արդյունքը», «թիրախի խոցման միավորների գումարը», «դիֆերենցված ստուգարքի միավորը», «ընթացիկ գնահատականների միջին թվաբանականը», «մոդուլի վերջնական գնահատականը թվերով», «մոդուլի վերջնական գնահատականը տառերով» և «դասախոսների ստորագրությունները»:
17.4. Դիֆերենցված ստուգարքի հարցաշարն ու վարժությունների ցանկը, տոմսերը և հրաձգության վարժության կատարման նկարագիրոր հաստատվում են կրթաճյուղի նիստում: Հարցաշարը, վարժությունների ցանկը և հրաձգության վարժության կատարման նկարագիրը տրամադրվում է սովորողներին ոչ ուշ, քան ստուգարքային շաբաթը սկսելուց 10 օր առաջ:
17.5. Յուրաքանչյուր տոմսում նախատեսվում է մեկ հարց և մեկ վարժություն:
17.6. Դիֆերենցված ստուգարքի համար նախատեսված առաջին ուսումնական պարապմունքի ընթացքում սովորողի կողմից տոմսը ընտրելուց հետո նրան տրվում է 10 րոպե պատրաստվելու համար: Պատասխանին պատրաստվելիս սովորողն իրավունք ունի դասախոսի կողմից տրամադրված և ստորագրված թերթիկի վրա կատարել նշումներ և պատասխանելիս օգտվել դրանցից:
17.7. Սովորողի կողմից տրված պատասխանի և վարժության կատարման գնահատման հիման վրա դասախոսը դիֆերենցված ստուգորքի տեղեկագրի «բանավոր հարցման և վարժության կատարման արդյունքը» սյունակում կատարում է «ստուգված» կամ «չստուգված» նշումը:
17.8. Տոմսի հարցին սովորողի կողմից տրված պատասխանը գնահատելիս դասախոսը հաշվի է առնում պատասխանի վերաբերելիությունը հարցին, պատասխանի ճշտությունը և լրիվությունը: Սովորողի կողմից վարության կատարումը գնահատելիս դասախոսը հաշվի է առնում վարժության կատարման ճշտությունը և անվտանգության կանոնների պահպանումը:
17.9. Եթե սովորողը ստանում է «ստուգված» նշումը, ապա դասախոսը թույլատրում է նրա մասնակցությունը հաջորդ ուսումնական պարապմունքին գործնական հրաձգությանը:
17.10. Եթե սովորողը ստանում է «չստուգված» նշումը, ապա դասախոսը չի թույլատրում նրա մասնակցությունը հաջորդ ուսումնական պարապմունքին գործնական հրաձգությանը, և

երկրորդ ուսուանական պարապմունքի ժամանակ դիֆերենցված ստուգարքի տեղեկագրում ամրագրվում է 0 գնահատականը:
17.11. Դիֆերենցված ստուգարքի համար նախատեսված երկրորդ ուսումնական պարապմունքի ընթացքում սովորողը կատարում է 10 ստուգարքային կրակոց:
17.12. Դիֆերենցված ստուգարքի միավորը ձևավորվում է 10 ստուգարքային կրակոցների արդյունքում թիրախի խոցման միավորների հանրագումարից, հետևյալ սանդղակով.

թիրախի խոցման միավորների գումարը	**համարժեք միավորը**
0	0
1-10	1
11-20	2
21-30	3
31-40	4
41-50	5
51-60	6
61-70	7
71-80	8
81-90	9
91-100	10

17.13. Եթե սովորողը գործնական հրաձգության ժամանակ խախտում է անվտանգության կանոնները կամ վարժության կատարման պայմանները, ապա գործնական հրաձգությունը դադարեցվում է, և անկախ թիրախի խոցման միավորների գումարից տեղեկագրում որպես մոդուլի վերջնական գնահատական ամրագրվում է 0 միավորը:

18. «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ» ՄՈԴՈՒԼԻ ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍՏՈՒԳԱՐՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18.1. «Ոստիկանության վարչական գործունեություն» մոդուլի դիֆերենցված ստուգարքի անցկացման համար մոդուլային ծրագրով նախատեսվում են վերջին երկու ուսումնական պարապմունքները (4 ակադեմիական ժամ):
18.2. Դիֆերենցված ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման և գործնական առաջադրանքի կատարման ձևով, տոմսերի միջոցով:
18.3.Դիֆերենցված ստուգարքի տեղեկագիրը պետք է բովանդակի հետևյալ սյունակները՝ «սովորողի ազգանունը, անունը, հայրանունը», «ստուգման գրքույկի համարը», «տոմսի համարը», «բանավոր հարցման միավորը», «գործնական առաջադրանքի միավորը», «դիֆերենցված ստուգարքի միավորը», «ընթացիկ գնահատականների միջին թվաբանականը», «մոդուլի վերջնական գնահատականը թվերով», «մոդուլի վերջնական գնահատականը տառերով» և «դասախոսի ստորագրությունը»:
18.4. Դիֆերենցված ստուգարքի բանավոր հարցման հարցաշարը, գործնական առաջադրանքների ցանկը և տոմսերը հաստատվում են կրթաճյուղի նիստում : Հարցաշարը և գործնական առաջադրանքների ցանկը տրամադրվում են սովորողներին ոչ ուշ, քան ստուգարքային շաբաթը սկսելուց 10 օր առաջ:
18.5. Տոմսերում նախատեսվում է մեկ հարց և մեկ գործնական առաջադրանք : Սովորողի կողմից տոմսը ընտրելուց հետո նրան տրվում է առավելագույնը 10 րոպե պատրաստվելու համար: Պատասխանին պատրաստվելիս սովորողն իրավունք ունի դասախոսի կողմից

տրամադրված և ստորագրված թերթիկի վրա կատարել նշումներ և պատասխանելիս օգտվել դրանցից: Սովորողի կողմից բանավոր հարցման պատասխանը գնահատվում է 0-ից 5 միավոր, մեկ միավոր գնահատման քայլով: Տոմսի հարցին սովորողի կողմից տրված պատասխանը գնահատելիս դասախոսը հաշվի է առնում պատասխանի վերաբերելիությունը հարցին, պատասխանի ճշտությունը և լրիվությունը: Սովորողի կողմից գործնական առաջադրանքի կատարումը գնահատվում է է 0-ից 5 միավոր, մեկ միավոր գնահատման քայլով: Սովորողի կողմից գործնական առաջադրանքի կատարումը գնահատելիս դասախոսը հաշվի է առնում առաջադրանքի կատարման լրիվությունը և ճշտությունը:
18.6. Դիֆերենցված ստուգարքի միավորը ձևավորվում է բանավոր հարցման և գործնական առաջադրանքի կատարման միավորների հանրագումարից:

19. «ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄՈԴՈՒԼԻ ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍՏՈՒԳԱՐՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19.1. «Ծառայության իրականացման մարտավարություն» մոդուլի դիֆերենցված ստուգարքի անցկացման համար մոդուլային ծրագրով նախատեսվում են վերջին չորս ուսումնական պարապմունքները (8 ակադեմիական ժամ):
19.2. Դիֆերենցված ստուգարքի համար նախատեսված առաջին և երկրորդ ուսումնական պարապմունքների ընթացքում անցկացվում է դիֆերենցված ստուգարքի առաջին մասը՝ բանավոր հարցման ձևով, տոմսերի միջոցով, իսկ երկրորդ և երրորդ ուսումնական պարապմունքների ընթացքում անցկաց վում է դիֆերենցված ստուգարքի երկրորդ մասը՝ վարժությունների կատարման ձևով, տոմսերի միջոցով:
19.3. Դիֆերենցված ստուգարքի տեղեկագիրը պետք է բովանդակի հետևյալ սյունակները՝ «սովորողի ազգանունը, անունը, հայրանունը», «ստուգման գրքույկի համարը», «բանավոր հարցման տոմսի համարը», «բանավոր հարցման միավորը», «վարժության տոմսի համարը», «վարժության միավորը», «դիֆերենցված ստուգարքի միավորը», «ընթացիկ գնահատականների միջին թվաբանականը», «մոդուլի վերջնական գնահատականը թվերով», «մոդուլի վերջնական գնահատականը տառերով» և «դասախոսների ստորագրությունները» :
19.4. Դիֆերենցված ստուգարքի բանավոր հարցման հարցաշարը, բանավոր հարցման տոմսերը, վարժությունների ցանկը, վարժությունների տոմսերը հաստատվում են կրթաճյուղի նիստում: Հարցաշարը և վարժությունների ցանկը տրամադրվում են սովորողներին ոչ ուշ, քան ստուգարքային շաբաթը սկսելուց 10 օր առաջ:
19.5. Դիֆերենցված ստուգարքի առաջին մասի համար կազմված տոմսերում նախատեսվում է մեկական հարց:
19.6. Դիֆերենցված ստուգարքի համար նախատեսված առաջին և երկրորդ ուսումնական պարապմունքների ընթացքում սովորողի կողմից տոմսը ընտրելուց հետո նրան տրվում է առավելագույնը 10 րոպե պատրաստվելու համար: Պատասխանին պատրաստվելիս սովորողն իրավունք ունի դասախոսի կողմից տրամադրված և ստորագրված թերթիկի վրա կատարել նշումներ և պատասխանելիս օգտվել դրանցից: 17.7. Սովորողի կողմից տրված պատասխանը գնահատվում է 0-ից 3 միավոր, մեկ միավոր գնահատման քայլով:
19.8. Տոմսի հարցին սովորողի կողմից տրված պատասխանը գնահատելիս դասախոսը հաշվի է առնում պատասխանի վերաբերելիությունը հարցին, պատասխանի ճշտությունը և լրիվությունը:
19.9. Դիֆերենցված ստուգարքի երկրորդ մասի համար կազմված տոմսերում բովանդակվում է մեկական վարժություն:

19.10. Դիֆերենցված ստուգարքի համար նախատեսված երկրորդ և երրորդ ուսումնական պարապմունքների ընթացքում սովորողի կողմից տոմսը ընտրելուց հետո նա պետք է դասախոսի հրահանգով անմիջապես կատարի վարժությունը:
19.11. Սովորողի կողմից վարժության կատարումը գնահատվում է 0-ից 7 միավոր, մեկ միավոր գնահատման քայլով:
19.12. Սովորողի կողմից վարժության կատարումը գնահատելիս դասախոսը հաշվի է առնում վարժության կատարման մարտավարական ճշգրտությունը, լրիվությունը, և գործողությունների հերթականությունը, դրանց կատարման արագությունը և իրավաչափությունը, վերլուծական, արագ կողմնորոշման, որոշումների կայացման, մտքի ճկունության, դատողություններ անելու, հաղորդակցության և լարվածության նվազեցման հմտությունները:
19.13. Դիֆերենցված ստուգարքի միավորը ձևավորվում է բանավոր հարցման և վարժության կատարման միավորների հանրագումարից:

20. «ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՏՐԱՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԱՐՈՒՄ» ՄՈԴՈՒԼԻ ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍՏՈՒԳԱՐՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20.1. «Արտակարգ իրավիճակներում ավտոտրասպորտային միջոցների վարում» մոդուլի դիֆերենցված ստուգարքի անցկացման համար մոդուլային ծրագրով նախատեսվում են վերջին երեք ուսումնական պարապմունքները (6 ակադեմիական ժամ):
20.2. Դիֆերենցված ստուգարքն անցկացվում ավտոտրանսպորտային միջոցի վարման ստուգարքային վարժության կատարման ձևով:
20.3. Դիֆերենցված ստուգարքի տեղեկագիրը պետք է բովանդակի հետևյալ սյունակները՝ «սովորողի ազգանունը, անունը, հայրանունը», «ստուգման գրքույկի համարը», «դիֆերենցված ստուգարքի միավորը», «ընթացին գնահատականների միջին թվաբանականը», «մոդուլի վերջնական գնահատականը թվերով», «մոդուլի վերջնական գնահատականը տառերով» և «դասախոսների ստորագրությունները»:
20.4. Ավտոտրանսպորտային միջոցի վարման ստուգարքային վարժության նկարագիրը հաստատվում է կրթաճյուղի նիստում և տրամադրվում սովորողներին ոչ ուշ, քան ստուգարքային շաբաթը սկսելուց 10 օր առաջ:
20.5. Յուրաքանչյուր սովորողին դիֆերենցված ստուգարքի անցկացման համար նախատեսված ժամանակահատվածում տրվում է ավտոտրանսպորտային միջոցի վարման ստուգարքային վարժությունն առավելագույնը 5 անգամ կատարելու հնարավորություն:
20.6. Սովորողի կողմից ստուգարքային վարժության կատարումը գնահատվում է 0-ից 10 միավոր, մեկ միավոր գնահատման քայլով:
20.7. Սովորողի կողմից ստուգարքային վարժության կատարումը գնահատելիս դասախոսը հաշվի է առնում վարժության կատարման ճշտությունը և լրիվությունը:
20.8 Դիֆերենցված ստուգարքին չի թույլատրվում «Բ» կարգի վարորդական վկայական չունեցող սովորողի մասնակցությունը: Այդ դեպքում դիֆերենցված ստուգարքի տեղեկագրում կատարվում է «չի թույլատրվել» նշումը : Նշված սովորողի մասնակցությունը դիֆերենցված ստուգարքին թույլատրվում է միայն նրա կողմից «Բ» կարգի վարորդական վկայական ձեռք բերելու փաստը հավաստող զեկուցագրի հիման վրա: Այդ դեպքում սովորողը դիֆերենցված ստուգարքը հանձնում է ընդհանուր հիմքունքներով՝ որպես առաջին հանձնում:

21. «ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՄՈԴՈՒԼԻ ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍՏՈՒԳԱՐՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21.1. «Հատուկ տեխնիկա և տեղեկատվական անվտանգություն» մոդուլի դիֆերենցված ստուգարքի անցկացման համար մոդուլային ծրագրով նախատեսվում են վերջին երկու ուսումնական պարապմունքները (4 ակադեմիական ժամ):
21.2. Դիֆերենցված ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով, տոմսերի միջոցով:
21.3. Դիֆերենցված ստուգարքի տեղեկագիրը պետք է բովանդակի հետևյալ սյունակները՝ «սովորողի ազգանունը, անունը, հայրանունը», «ստուգման գրքույկի համարը», «տոմսի համարը», «դիֆերենցված ստուգարքի միավորը», «ընթացիկ գնահատականների միջին թվաբանականը», «մոդուլի վերջնական գնահատականը թվերով», «մոդուլի վերջնական գնահատականը տառերով» և «դասախոսի ստորագրությունը»:
21.4. Դիֆերենցված ստուգարքի հարցաշարը և տոմսերը հաստատվում են կրթաճյուղի նիստում: Յուրաքանչյուր տոմսում նախատեսվում է երկու հարց: Հարցաշարը տրամադրվում է սովորողներին ոչ ուշ, քան ստուգարքային շաբաթը սկսելուց 10 օր առաջ:
21.5. Սովորողի կողմից տոմսը ընտրելուց հետո նրան տրվում է 10 րոպե պատրաստվելու համար: Պատասխանին պատրաստվելիս սովորողն իրավունք ունի դասախոսի կողմից տրամադրված և ստորագրված թերթիկի վրա կատարել նշումներ և պատասխանելիս օգտվել դրանցից:
21.6. Տոմսի յուրաքանչյուր հարցի պատասխանը գնահատվում է 0-ից 5 միավոր, մեկ միավոր գնահատման քայլով: Սովորողի պատասխանը գնահատելիս դասախոսը հաշվի է առնում պատասխանի վերաբերելիությունը հայցին, պատասխանի ճշտությունը և լրիվությունը:
21.7. Դիֆերենցված ստուգարքի միավորը ձևավորվում է տոմսի երկու հարցերի պատասխանների միավորների գումարից:

22. ՍՏՈՒԳԱՐՔԻ ԿԱՄ ԴԻՖԵՐԵՆՑՎԱԾ ՍՏՈՒԳԱՐՔԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄԸ

22.1. Եթե սովորողն ուսումնառությունը սկսելուց մինչև մասնագիտական պրակտիկայի սկիզբը երեք առարկայի և (կամ) մոդուլի ստուգարքներից և (կամ) դիֆերենցված ստուգարքներից ստացել է «չստուգված» նշում և (կամ) «անբավարար» գնահատական, ապա այդ սովորողի ստուգարքների և (կամ) դիֆերենցված ստուգարքների վերահանձնում չի կազմակերպվում, և սովորողն ազատվում է Կրթահամալիրից (դադարեցվում է գործուղված ծառայողի վերապատրաստումը):
22.2. Եթե սովորողը ուսումնառությունը սկսելուց մինչև ուսումնական պլանով նախատեսված բոլոր ուսումնական պարապմունքների ավարտը մեկ կամ երկու առարկայի և (կամ) մոդուլի ստուգարքներից և (կամ) դիֆերենցված ստուգարքներից ստացել է «չստուգված» նշում և (կամ) «անբավարար» գնահատական, ապա այդ սովորողի ստուգարքների և (կամ) դիֆերենցված ստուգարքների վերահանձնումը կազմակերպվում է ուսումնական պլանով նախատեսված բոլոր ուսումնական պարապմունքների ավարտից հետո, մինչև մասնագիտական պրակտիկայի ավարտը: Սույն կետով նախատեսված դեպքում սովորողն իրավունք ունի յուրաքանչյուր ստուգարքը (կամ) դիֆերենցված ստուգարքը վերահանձնել երկու անգամ: Երկրորդ վերահանձնումն իրականացվում է Կրթահամալիրի պետի հրամանով ձևավորված հանձնաժողովի կողմից:
22.4. Ստուգարքների և դիֆերենցված ստուգարքների վերահանձնումների ժամանակացույցը հաստատվում է Կրթահամալիրի ուսումնական կենտրոնի պետի կողմից:

22.5. Թեստավորման ձևով անցկացված դիֆերենցված ստուգարքի երկրորդ վերահանձնումը կատարվում է բանավոր հարցման ձևով, երեք հարց բովանդակող տոմսերի միջոցով: Հարցաշարը և տոմսերը հաստատվում են կրթաճյուղի նիստում: Հարցաշարը երկրորդ վերահանձնումից առնվազն հինգ օր այաջ տրամադրվում է սովորողներին:
22.6. Եթե սովորողը «Կրակային պատրաստականություն» մոդուլի դիֆերենցված ստուգարքի հանձնման ժամանակ բանավոր հարցման և վարժության կատարման համար ստացել է «ստուգված» նշում, բայց գործնական հրաձգության կատարման համար ստացել է «անբավարար» գնահատական, ապա դիֆերենցված ստուգարքի վերահանձնման ժամանակ սովորողը կատարում է միայն գործնական հրաձգությունը: Մյուս մոդուլների ստուգարքների (դիֆերենցված ստուգարքների) վերահանձնումը կատարվում է ամբողջ ծավալով, դրանց առաջին հանձնման համար սահմանված ընթացակարգով:
22.7. Ստուգարքի երկրորդ վերահանձնումից «չստուգված» նշում ստացած (դիֆերենցված ստուգարքի երկրորդ վերահանձնումից «անբավարար» գնահատական ստացած) սովորողն ազատվում է Կրթահամալիրից (դադարեցվում է գործուղված ծառայողի վերապատրաստումը):